3993

ՀԱՅԿԱԿՈՒԹԻՒՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

ՍԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

Բ. ՏԱՐԻ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ, ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ. ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ԳՐԵԼ ՈՒ ԳՆԵԼ
ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԻԱՑԵԱԼ
1880
ՄՈՒԼԻՍ
1908

Ծանօթէն անծանօթը
Պարզէն բաղադրեալը
Դէմ յանդիմանական ուսուցում
Ասիճանական զարգացում

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ
Կ. Պոլիս

1911

491.99-8
Մ-23

W. 47,

ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱՋՄԱՏՈՒՆ
Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ԳԵՐՍԷՍԵԱՆ
Սուլթան-Համամ
Կ. ՊՈԼԻՍ

2010

ՍԱՅԻԹԵՆԻ ԼԵԶՈՒ

ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

Բ. ՏԱՐԻ

ՌԵԴԱԿՑԻԱ ՊՈԼԻՍ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

491.99-81
Մ-23
(1008/35'4,71 / 16838-58

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

Բ. ՏԱՐԻ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ, ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ, ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ.
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ԳՐԵԼ ՈՒ ԳԾԵԼ

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

Ծանօթէն անծանօթը
Պարզէն բաղադրեալը
Դէմ յանդիմանական ուսուցում
Աստիճանական զարգացում

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Վ. ԵՒ Հ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ
Կ. Պոլիս
1910

№ 2002

33286-Ա.Ֆ.

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Կ. Պոլիս, 5 Փետրուար, 1905

Համար 1901

ՎԱՒԵՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ուսումն. Խորհուրդս ինքնութեան առաւ «Մայրենի Լեզու» դասագիրքին Բ. մասն՝ որ կը պատկանի Մանկապարտէզի շրջանի, եւ անոր պարունակութիւնն օգտակար եւ պատրաստութիւնը հանձնայն գտնելով Ազգ. Վարժարանաց Կրթական Ծրագրին՝ վաւերացուց զայն, եւ արտօնեց անոր կիրառութիւնը Մանկապարտէզներու աշակերտաց եւ աշակերտուհեաց համար:

Ի Դիմաց Ուսումն. Խորհրդոյ

Վ. Ատենադպիր — Ատենապետ

ԲԱՐՍԵՂ ԱԻԵՏԻՍԵԱՆ — ՏՈՔԹ. Տ. ԱՃԷՄԵԱՆ

ԶԵԿՈՅՑ

ՄԵԹՈՏ

Նոր պատրաստուած ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ Բ. ՏԱՐԻ դասագրքին առթիւ Պատ. Ուսուցիչներու սա՛ թելադրութիւնները կ'ընենք.

Ա. ԱՐՏԱԳՐԵԼ.—Ամեն օրուան դասեն մաս մը աշակերտներուն արտագրել տալ քարեխախտակի վրայ, որպէս զի տղոց գիրը յղկուի եւ անոնք դիւրասահ ընթերցանութեան եւ ուղղագրութեան պատրաստուին:

Բ. ԿԱՐԴԱԼ.—Ուսուցիչը համարձակ ու յստակ առոգանութեամբ կը կարդայ ու կը կարդացնէ օրուան դասը քանի մը աշակերտներու: Այս միջոցին բացատրել կէտերու եւ նշաններու կատարած դերը: Ընթերցանութեան ատեն մարմինն ուղիղ դիրքի մէջ պահելու է:

Գ. ԲԱՑԱՏՐԵԼ.—Կարդացուած հատուածին մէջ տղոց անծանօթ բառերուն սահմանը տալ հայերէն բացատրութեամբ կամ հայերէն համանիշով, ո՛չ թէ անոր օտար համանիշ բառն ըսել: Օրինակ՝ սփռոց=սեղանին վրայ դրուած ծածկոյթ. սեղանը մաքուր մնալու համար՝ վրան ձգուած լաթը կ'ըսուի սփռոց: Այս դրութիւնը կը կոչուի ուղիղ ոճ=Մեթոդ դիրեկտ, այսինքն ո՛ եւ է լեզու սորվեցնել ուղղակի իր միջոցներով, օտար լեզուի բառեր չգործածել դասաւանդման ատեն:

Դ. ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԳՐԵԼ.—Ենթադրելով թէ արտագրութենէ ու ընթերցումէ ետք բառերը տղոց

միտքին մէջ կը պատկերացնեն, թելադրութեամբ գրելով պիտի հասկցուի թէ տղայք ո՛ր աստիճան յաջողած են նաեւ ուղղագրութեան մէջ:

Ե. ՀԱՐՑՆԵԼ.—Ասոր նպատակն է 1. Աւանդուած դասը դիւրըմբռնել. 2. Աշակերտին միտքն ինքնագործութեան մղել, 3. Աշակերտին ուշադրութիւնը շարժել եւ զայն լարուած վիճակի մէջ պահել: Հարցումներն ըլլալու են. 1. Ցոյժ, տղուն անծանօթ բառեր ու բացատրութիւններ չգտնուին: 2. Հարցնել բարձր ձայնով, յստակ, ու վայելուչ առոգանութեամբ: 3. Հարցումը պիտի ըլլայ որոշ, այսինքն մէկ նախադասութիւն պարունակող, եւ նախընթաց հարցման շարունակութիւնը: 4. Հարցումներն ուղղել տղոց զարգացման աստիճանին համեմատ: Այս չորս կէտերն ալ նկատի առնուած են: Հարցումն ուղղել բոլոր աշակերտներուն որ ամենքն ալ խորհիլ թելադրուին, յետոյ անոնցմէ մէկը հրաւիրել որ պատասխանէ:

Զ. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ=ԳՈՅՑ ԸՆԵԼ.—Ընթերցարանին ոտանաւորներն արտասանել, գոց ընել, համարձակ, ուղիղ, եւ վայելուչ առոգանութեամբ:

Զ. ԳԾԵԼ.—Ինչպէս Մանկապարտէզի Ա. Տարւոյ մէջ, նոյնպէս այս Բ.ին մէջ ալ դրուած են գծելու վարժութիւններ՝ գրիչն ետեւը, պարզէն բաղադրեալը. աշակերտները զանոնք պիտի գծեն իրենց քարեսախսակներու վրայ, իւրաքանչիւր դասի մէկ պատկեր:

Ը. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ դասերը քաղուած են տղոց դիւրըմբռնելի իրագիտական, ընտանեկան եւ բարոյական նիւթերէ: Իւրաքանչիւր արձակ նիւթի յանախ կը յաջորդէ այդ նիւթը լրացնող ոտանաւոր մը:

Թ. ԻՐԱԶՆՆԱԿԱՆ.—Ա. Տարւոյ պէս Բ. տարւոյ

նիւթերն ալ դէմ յանդիմանական ուսուցման մեթոտով պատրաստուած են: Մէն մի դաս նիւթ ունի իր առարկան ներկայացնող պատկերը՝ դաս հեշտ, հաճելի եւ օգտակար ընծայելու համար:

Այս թելադրութեամբ ու մեթոտով տղայն պիտի սորվի գրել, գծել, կարդալ, ուղղագրել ու խօսիլ, եւ իրեն հանդիպած բառերը բացատրելով՝ տղուն ծանօթութեան սահմանը պիտի ընդարձակուի: Այս է ամենեն բնական եղանակն որ է Մանկավարժական Դիտողը:

ՆՊԱՍՏԻՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

1905, Յունիս 5

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ
ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ
Բ. ՏԱՐԻ

ԴԱՍԱՐԱՆ

Դասարանին մէջ նստած են մանուկները։ Անոնց առջեւ կանգնած կամ նստած է դասախարակը։ Դասախարակը դաս կ'ուսանէ։ Մանուկները դաս կ'առնեն։ Երբոր դասախարակը նշան կ'ընէ, աշակերտներն ոտքի ելելով կ'աղօթեն, յետոյ կը նստին, իրենց դասերը կը սերտեն։ Տղայք դասարանին մէջ կամ կը կարդան և կամ կը գրեն։ Երբեմն անոնք կը գծագրեն, շատ անգամ թիւերով կը հաշուեն։ Դասարանին մէջ գրուած է մեծ գրատախտակ մը։

Թելադրութիւններ. — Որո՞նք են դասական առարկաները։ Ի՞նչ կ'ընեն գրիչով, քանակով, մատիտով, թանաքամանով, զմելիով։ Գիրքն ի՞նչ կ'ընեն։ Ինչի՞ յատուկ է տետրակը, գրատախտակը, քարեատախտակը, զմելին։

Բացատրել անջատ գիրերով բառերն ու թելադրութեամբ գրել։

Ա. Ռ Ա. Ծ

Ինչ որ գրուեցաւ գրիչով, չի հանուիր բահով բրիչով։

ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ

Փառք քեզ, Աստուած իմ, որ զիս այսօր ալ
Արժանի ըրիր Մանկապարտէզ գալ,
Շնորհիիդ ցօղէն, Տէ՛ր, կաթէ՛ իմ վրայ
Որ հոգիս անբիծ, սիրտս սուրբ ըլլայ։
Լոյս տո՛ւր, Տէ՛ր, միտքիս, զգացում՝ սիրտիս,
Արեւէդ՝ արեւ անոյշ ծնողքիս,
Հանքերութիւն տո՛ւր քարի ուսուցչիս.
Քուկին զաւակդ եմ, ո՜վ Տէր, օրհնէ՛ զիս։

ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Շնորհակալ ենք, ո՜հ, Տէ՛ր Յիսուս,
Դուն կեանքդ տուիր մե՛զ աւետնուս,
Շնորհակալ ենք. մեզ կը սիրես,
Դուն փոքր տղոց քարեկամն ես։

Հայրիկն քովն ես՝ մեր վերեւ,
Մայրամուտը գնաց արեւ,
Մենք ալ, Յիսուս, պիտ՝ երթանք տուն.
Ո՜հ, առաջնորդ եղի՛ր մեզ դուն։

Տո՛ւր, տո՛ւր, մեզի քուն անուշիկ
Որ քնանանք մշիկ, մշիկ,
Սուրբ հրեշտակդ թող մեզ հսկէ,
Հայրիկ, մայրիկն ալ Տէ՛ր պահէ։

ՀԱՅՐԻԿՍ

Սիրեմ քեզ, հայր ժրաջան,
Որ կ'աշխատիս ամէն ժամ,
Կանուխ կ'երթաս առտուան
Եւ ուշ դառնաս իրիկուան։

Թելադրութիւններ.—Շեղագիր բառերը բացատրել ու թելադրութեամբ գրել։

ՆԱԽԸՆԹՐԻՔ

Սեղանի սպասներ

Մարկոս վարժարանէն դառնալով սեղանը պատրաստ կը գտնէ։

Սպիտակ սփռոցի մը վրայ դրուած են հաց, գաւաթ, դանակ, կրծկալ մը ու սկաւառակ մը։



Հաւկիթ

Բաբի մայրն անոր կը բերէ թարմ հաւկիթ որ ուտէ։

Տանձ

Պարտէզէն քաղուած տանձ ալ կուտայ իբր աղանդեր։

Թելադրութիւններ. — *Ուտելիք.* Ի՞նչ է հացը, արգանակը, խորոված, մածունը, սերը, կարկանդակը, իւղը, պանիրը։ *Խմելիք.* Ի՞նչ կ'ընեն ջուրը, թէյը, գինին, կաթը, գարեջուրը, սուրճը։

ԽԱՂԵՐ



Բարան=ճոյռիկ

Երբ տղայք վարժարանին մէջ լաւ աշխատին, անոնց կ'արտօնուի որ խաղան։

Ահա երկու տղայք որ բաբան=ճոյռիկ կը խաղան։

Շրջանակ

Ահա ուրիշ մին ալ որ շրջանակ կը դարձնէ։

Հանգչելու համար ուրիշներ մատանցիկ կը խաղան։

Ձի

Փոքրիկ Ատաւժան իր մեծ եղբօրը հետ փայտէ ձի մը կը վարէ։

Թելադրութիւններ. — Եթէ տղան բնակած տեղը կան սա՛ խաղերը, թո՛ղ բացատրէ։ Ի՞նչ է կկոտ, ընկոյզ. գնդակ, ազատիշտիկ, այֆ-կապուկ, սահնակ, գերեռուկ, ճիպոտ, ծափիկ, մեծպար, տնտիկ, ցատկտան, սպտուտակ, եշ-խաղուկ, վեգ, Թելադրութեամբ գրել հատուածը։

Ա. Ռ Ա. Ծ

Աղ ու հայ, սիրտը բայ.
Հայ ու պանիր, կեր ու բանիր։

Հ Ա. Ն Ե Լ. Ո Ի Կ

Ճերմակ տակառիկ, մէջն է երկու ցեղ ըմպելիք։
(Հաւկիթ)

Ե Օ Թ Ը Գ Ո Ց Ն Ե Ր

Զիւնը ճերմակ է
Մեղանը սև է
Ոսկին դեղին է
Ծիրանը կարմիր է
Տերեւը կանաչ է
Երկինքը կապոյտ է
Մանուշակը մանիշակագոյն է։

Ե Ա Ղ Ե Ր Գ

Օ՜ն, ա՛յ տղա՛ք, առէ՛ք ձեր վեգ,
Գլտոր մլտոր քսխտ նայեցէ՛ք,
Դու՛ք, աղջիկներ, ճկոյթ առէ՛ք,
Քով քովտի ելէ՛ք, կեցէ՛ք։
Հապօ՜ն, նայինք, դու՛ք շար-պարը
Բռնեցէ՛ք շուտ, եւ շար-վարը.
Կամ թէ ճապուկ ճոկան առէ՛ք
Իրարու հետ ճիպոտ խաղցէ՛ք։
Մեծ ու պզտիկ գնդակ խաղան,
Ազատիշտիկ ալ չմոռնան,
Սիրուն խաղ է այֆ-կապուկը,
Զմրան խաղ է մեր սահնակը։

Թելադրութիւններ. — 1. Ճեղագիր բառերը բացատրել. 2. Թելադրութեամբ գրել հատուածը։

Հ Ա. Ն Ե Լ. Ո Ի Կ

Քանի որ ծեծը կ'ուտէր՝ ուրախութեամբ կը շրջէր, երբոր ծեծը վերցաւ, ինկաւ գետին ու մեռաւ։
(Հոլ)

ԵԿԵՂԵՑԻՆ

Ժամին մէջ կան խաչ ու խորան
Զահ ու բուրվառ, սանտարան,
Շուրջառ, փիլոն, շքեղ խոյրեր,
Խորանին վրայ սուրբի պատկեր:
Կը հաւատին հոն շատ մարդիկ,
Աղօթք կ'ընեն մեծ ու պզտիկ,
Յետոյ կ'առնեն մատ ու նշխար
Բոլոր մարդիկ հաւասար:

Թելադրութիւններ.— *Եկեղեցւոյն մէջ ինչե՞ր կան։ Որո՞նք կը կրեն շուրջառ, փիլոն, խոյր։ Բացատրել շեղագիրները, հարցումներ ուղղել։ Թելադրութեամբ գրել հատուածը։*

ԳԻԼԽԱԳԻՐ ԽԱՌՆ

Ա. Բ. Կ. Ն. Մ. Բ. Ջ. Ծ. Շ. Տ. Բ. Ի. Մ. Վ. Գ. Խ. Ջ. Փ. Ժ.
Ո. Օ. Ջ. Ր. Թ. Ջ. Է. Ռ. Հ. Ֆ. Պ. Ճ. Ղ. Լ. Ի. Ե. Ց. Դ. Ց.

Ա. Ռ Ա. Ծ

Ամէն մարդ իրենը գիտէ, տէրտէրն ամէնունը։

ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Սպունգ ու լական

Երբ դուք կ'արթընանաք, ձեր առաջին խնամքը պիտի ըլլայ լուացուիլ ձեր ծնողքը գրկելէ ետք։

Սանտր

Լուացուելու համար դուք կը գործածէք սպունգ մը կամ անձեռոց մը լականին մէջի ջրով թրջելով։



Սանտր

Յետոյ ձեր մազերը կը սանտրէք, կը յարդարէք սանտրով և կամ նուրբ խոզանակով։

Հայելի

Դուք ձեզ յարդարելու համար՝ հայելին կը նայիք։

Թելադրութիւններ. — *Ո՞րն է ձեր առաջին խնամքը, լուացուելէ ետք ի՞նչ պիտի ընէք։ Ինչո՞վ կը սանտրուիք, կը յարդարէք։ Կը խոզանակէ՞ք։*

ԽՈՀԱՆՈՑ



Խորովանոթ

Խորովկ պարկեշտ աղախին մըն է, խոհանոցին մէջ խնամք կը տանի, խոհանոցը միշտ մաքուր է։

Փուռ

Մինչեւոյն ատեն խոհանոցին օջախին մէջ կը խորովէ վառեակ միս։

Հաց կ'եփէ թոնիրին, փուռին մէջ։



Ջրանոթ

Ճաշը կը պատրաստէ, սուրճը կ'եռայ սրճեփին մէջ։

Թելադրութիւններ. — Խորովկ ի՞նչպէս աղջիկ է։ Ի՞նչ կ'ընէ խոհանոցին մէջ։ Թոնիրի՞ն մէջ։ Փուռի՞ն մէջ։ Ուրիշ ինչե՞ր կ'ընէ։

Բացատրել անջատ գիրերով բառերը։ Թելադրութեամբ գրել հատուածը։

ՆՆՋԱՍԵՆԵԱԿ



Մահճակալ

Ձեր ծնողքը գիշերը կը հանգչին մեծ անկողնի մէջ։ Անկողնին քով դրուած է փոքրիկ քրոջը օրօրոցը։ Այս գիշեր պիտի օրօրէք որ քնանայ ձեր քոյրը։ Օրօրոցին երկու ոտքերը կլորած ու դաւազանաձեւ փայտերու վրայ դրուած ըլլալով դիւրին կը շարժի։



Օրօրոց

Պատուհանին առջեւ կայ սեղան մը, իրիկուանը անոր բոլորտիքը կը հաւաքուինք աշխատելու համար։



Սեղան

Թելադրութիւններ. — Գիշերն ո՞ւր կը հանգչին ձեր ծնողքը։ Ո՞ւր է օրօրոցը։ Գիշերն ի՞նչ պիտի ընէք։ Ինչո՞ւ։ Նկարագրեցէք օրօրոցը։ Ո՞ւր է սեղանը։

ՄԱՐԴ

Գլուխ

Մարդ ունի երկու աչք տեսնելու համար, երկու ականջ լսելու համար։

Լեզու մը խօսելու համար։

Ատնք մեզի կը ցուցնեն թէ միշտ մտիկ ընելու և հնազանդելու ենք։



Թեւ

Երկու ոտք ու երկու սրունք ունինք քալելու համար, և տեղէ տեղ երթալու համար։

Հոտոտելու համար և շնչառութեան համար՝ ունինք քիթ մը։

Ձեռք

Ոտք

Երկու ձեռք և երկու բազուկ, տասը մատ՝ գործելու համար։

Թելադրութիւններ.— Մարդ քանի՞ աչք ունի։ Ինչո՞ւ։ Քանի՞ ականջ։ Ինչո՞ւ։ քանի՞ լեզու։ Ինչո՞ւ։ Ատնք ի՞նչ կը սորվեցնեն մեզի։ Քանի՞ ոտք ունինք։ Ինչո՞ւ։ Քանի՞ քիթ։ Ինչո՞ւ։ Քանի՞ ձեռք։ Ինչո՞ւ։ Քանի՞ ոտք։ Ինչո՞ւ։

Բացատրել անջատ գիրերով։ Թելադրութեամբ գրել հատուածը։

ՄԱՐԴՈՒՆ ՀԻՆԳ ԶԳԱՑԱՐԱՆԳՆԵՐԸ

Ես աչքով կը տեսնեմ,
Ականջովս կը լսեմ,
Քիթովս է որ հոտ կ'առնեմ,
Լեզուովս է որ համ կ'առնեմ։
Պաղն ու ցուրտը, կամ շոգն ու տաք,
Կոշտ ու կակուղ առարկաներ
Ինչո՞վ կ'զգամ, գիտէ՞ք.
Երբոր ձանձնք կը շօշափեմ։

Թելադրութիւններ. — Բացատրել չեզագիր-ները։ Թելադրութեամբ գրել հատուածը։

Մէկ	Երկու	Երեք	Չորս	Հինգ
1	2	3	4	5
Վեց	Եօթը	Ութը	Ինը	Տասը
6	7	8	9	10

Ա. Ռ Ա. Ծ

Մէկ ծաղիկով գարուն չիգար։

Հ Ա. Ն Ե Լ Ո Ի Կ

Քար քարի վրայ՝ քար չէ, լեռ սար կ'արածի՝ դուար չէ, հաւկիթ կ'ածէ՝ հաւ չէ։ (Կրիայ)

ՄԱՐԴՈՒՍ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Այս է բարձր, այս է ցած,
Նոյն է որչափ եմ սորված։
Այս է ձեղք, այս է շայն,
Դեռ գիտեմ շատ բան սակայն.
Երկու ձեռքերս են ճերմակ,
Մէկն է իմ աչ, իսկ միւսը՝ ձախ,

Հինգ փոքրիկ մատեր կլոր
Որով բռնեմ տանձ, սալոր,
Վարը իմ ոտքերս տե՛ս
Վերն ալ գլուխս նոյնպէս։
Հոս է քիթս, հոս իմ աչերս,
Զէք կարծեր որ խնատուն եմ։
Հիմա, աչերս, բաց մնացէք,
Իսկ երբ պառկիմ, գոցուեցէք։
Ահա բերանս ու կզակ իմ,
Շուտով կարդալ, գրել սորվիմ։
Հոս է դեռ իմ ձախ ձեռքս
Այս ալ իմ աչս է նոյնպէս։
Գլխուս վրայ կը վերցնեմ
Ծափ ծափ, ծափ ծափ կը զարնեմ
Իսկ երբ մեծնամ ձեզ նման,
Մեծ գործեր ընել կրնամ։

Թելադրութիւններ. — Բացատրել չեզագիր-ները։ Թելադրութեամբ գրել հատուածը։

Ա. Ր Ա. Գ Ա. Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Զուխտակ մը տրեմ չուրը դրի որ թրջի, կը թրջի, թող թրջի, չէ՛, չի թրջիր, թող չթրջի։

ԻՆՉՊԷՍ Է

Հացին փորը կակուղ է,
Ծառին ճիւղը բարակ է,
Պատին ծեփը ճերմակ է,
Քարին կողը կարծր է,
Հաւին մաքը հաւեղ է,
Սագին փետուրը թեթեւ է,
Բադին հաւկիթը մեծ է։

ԴՊՐՈՑԱԿԱՆԸ

Կաղամար

Մատիտ

Զմելի

Դպրոցականն ունի քանի մը անհրաժեշտ պէտքեր, գրիչ՝ գրելու համար, կաղամար՝ մելանը մէջը լցնելու համար։ Հոգածու դպրոցականը կաղամարը տեղը կը դնէ՝ գիրը լմնցնելէն ետք։ Մատիտ մը՝ գծելու

համար։ Մատիտը կը տաշեն՝ զմելիով։ Այսկա մէկ սուր բերան ունի։ Բերանը շինուած է պողպատէ։

Երբ դպրոցականը լաւ աշխատի ամբողջ տարին, Մրցանակաբաշխութեան կ'ստանայ պատկեր, և շատ գովեստի արժանի կ'ըլլայ։

Հոգածու տղան կը զգուշանայ մատերը մելանով աղտոտելէ և մելանը զգեստին վրայ թափելէ։ Իր զմելին հետ չի խաղար երբէք։

Թելադրութիւններ. — Որո՞նք են դպրոցականին անհրաժեշտ պէտքերը։ Ինչի՞ կը ծառայէ գրիչը։ Կաղամա՞ը։ Հոգածու դպրոցականը ի՞նչ կ'ընէ։ Ինչի՞ կը ծառայեն մատները։ Զմելի՞ն։ Նկարագրել զմելին։ Ի՞նչ է աշխատող դպրոցականին վախճանը։ Հոգածու տղան ինչերի՞ կը զգուշանայ։

Բացատրել անջատ գիրերով բառերը։ Ժելադրութեամբ գրել հատուածը։

ՀԱՆԵԼՈՒԿ

Գլուխս կարեցին, սրտիկս հանեցին, գինի խմցուցին, լեզուս բացուեցաւ, խօսիլ սկսայ։

(Փետուրէ Գրիչ)

Ա. Ռ Ա. Ծ

Գիրք՝ մէջը միրգ, ով կարդայ՝ ան մարդ է, ով կը խաղայ՝ ան կը կաղայ։

ԹԻՒԵՐՈՒ ՎՐԱՅ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

11 12 13 14 15 16 17 18 19 20

Այդ թիւերը կարդացէք ու գրով գրեցէք։

ԳՊՐՈՑ

Ի՜նչ աղուոր է դպրոց երթալ
Խաղալ, երգել, գրել, կարդալ։
Դեռ պզտիկ եմ, բայց շարունակ
Դաս սորվելու ունիմ փափաք։
Բան չեմ գիտեր այսօր՝ իրա՛ւ,
Բայց վարժուհիս ա՛յնպէս մ'ըրաւ,
Դասս ա՛յնպէս մը հասկցուց
Որ կ'ընթրնեմ զայն հիմակուց։
Ա՛ն ալ նման է մայրիկիս,
Կը խրատէ, կը կրթէ զիս։
Կ'ուզեմ մօրս պէս սիրել զինքն ալ
Տրուած դասերը չմոռնալ։

Թելադրութիւններ.— Բացատրել չեզագիրները։ Թելադրութեամբ գրել հատուածը։

Ա. Ռ Ա. Ծ

Աշան հաւը կարգճան կ'ըլլայ։

ՀԱԳՈՒՍՏ—ԿԱՊՈՒՍՏ

Հագուստ

Կօշիկ

Թիկնոցակը չորս կոճակ ունի, թիկնոցակը գրպան մը ունի. բաճկոնակը թեւ չունի, բայց թիկնոցակին ունի երկու թեւ։

Ինչո՞վ կը ծածկես գլուխդ, ինչ գոյն ունի գլխարկը, գլխարկ կը դնես, ուսուցիչն ինչ գլխարկ կը դնէ։ Իմ տաքատս կարճ է, քուկինդ երկայն։ Յովհաննէսինը գծաւոր է, Սմբատինը՝ անգիծ։

Զմեռ ատեն ձեռնոց կը դնենք ձեռքերնիս՝ չմսելու համար։ Ձեռնոցը կը շինեն մորթով, կը հիւսեն բուրդով կամ մետաքսով։

Միհրան ագուռը կոշիկ մ'ունի, կոշկակարը կը կարէ կոշիկը, կոշիկը կը շինեն մորթով, կաշիով. կոշիկը կը ներկեն փայլեցնելու համար։

Թելադրութիւններ.— Որո՞նք են հագուստին մասերը։ Թիկնոցակը քանի՞ կոճակ ունի։ Ո՞րն է բաճկոնակը։ Տարատն ի՞նչպէս է։ Ի՞րը կը կրենք ձեռնոց։ Ինչի՞ շինուած է։ Միհրան ի՞նչ ունի։ Ինչի՞ կը շինեն կոշիկը։ Ի՞նչպէս կը փայլեցնեն։

Բացատրել անջատ գիրերով բառերը։ Թելադրութեամբ գրել։

ՊԱՌԱՒՆ ՈՒ ԱՑԾԸ

Պառաւն այծ մ'ունէր
Փոքրիկ, սիրուն այծ.
Ինք անով կ'ապրէր
Ադքատ ծնացած,
Խեղճուկ, մինակ,

Իր այծիկն օր մը
Ան դաշտը տարաւ,
Ծաղկած հովիտը
Արածել տուաւ,
Կուշտ, կուշտ, կուշտ, կուշտ,
Արածել տուաւ։
Մարտի ամսի վերջին
Խիստ քամի փչեց,
Պառաւի աչքէն
Այծը հեռացուցց,
Ախտո՜ւ, մե՜ծ ափսոս,
Այծը հալածեց։
Արիւնոտ գայլեր
Այծը յափշտակեցին,
Խեղճուկ պառաւին
Կոտոշներ թողին,
Միայն և միայն
Կոտոշներ թողին։
Պառաւն էր նստած՝
Փունջ խոտը ձեռին՝
Այծը կը կանչէր
Ձայնով տրտնգալի.
Եկո՛ւր, եկո՛ւր,
Ձայնով տրտնգալի։

Թելադրութիւններ. — Շեղագիրները բացատրել։

ԱՐԱԳԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Փոկակապ Յակոբ աղբար, թէ կրնաս՝ փոկ մը կապել, ես քեզի կ'ըսեմ՝ չնորհդ շատ, փոկակապ Յակոբ աղբար։

ՀԱՆԵԼՈՒԿ

Մէկը կանգնած՝ կը խօսի, երկուքն ականջ կը դնեն, իսկ երկուքը կը նային։

(Բերան, Ականջ, Աչք)

ԱՆՕԹՆԵՐ

Գաւաթ



Շիշ

Ձեր մայրն ո՞ւր կը պահէ ջուրը։ — Ի՞նչ կը կոչուի այն ամանն ուր ձեր մայրը ջուր կը լեցնէ, ու սեղանին վրայ կը դնէ խմելու համար։ — Ինչո՞վ կը խմէք։ — Քանի՞ տեսակ դաւաթ կայ։ — Մառանին



Տակառ

մէջ ո՞ւր կը պահուի գինին։ — Ի՞նչ է թակոյկը։ — Ի՞նչ է տակառը։

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ



Ակոր

Մարդ իր ու իր ընտանիքին հացը հայթայթելու համար ստիպուած է աշխատիլ։



Ցաքան

Այս աշխատութիւնն 'ի գործ կը դնէ հողին վրայ. հողագործը արօրով կը վարէ երկիրը։



Սայլ

Յետոյ կը ցանէ ցորեն եւ հողին մէջ կը ծածկէ սրածայր խոշոր ցաքանով։

Երբ ցորենը հասկ կապէ, արտունձը կը քաղէ մանգաղով, որպէս կը կապէ և սայլին մէջ կը փոխադրէ։

Թելադրութիւններ. — Մարդ ի՞նչպէս կը հայթայթէ հացը։ — Ի՞նչ կ'ընէ հողագործը։ — Ի՞նչ է արօրը։ — Ցաքա՞նը։ —Ի՞նչ է հասկը։ — Արտունձը ի՞նչ կ'ընէ։

Բացատրել անծանօթ բառերը։ Թելադրութեամբ գրել։

ԱՌԱԾ

Ես աղա, դուն աղա, մեր ալիւրը ո՞վ աղայ։

ՀԱՆԵԼՈՒԿ

Անջուր ջաղաց՝ անկրակ բաղարջ։ (Մեղր)

ԱՐՏՈՒՆՁՆԵՐՈՒ ՇՐՋԱՊԱՐԸ

Մեր արտերուն երբ Աստուած
Առաս առաս հունձ կը դրկէ,
Բարիքներէն զգածուած՝
Պէտք է ամէն մարդ երգէ։

Ուրախ նշան երբ տրուի,
Մեր շրջապարն սկսինք,
Ո՜հ, Շրջապարէն յիրաւի
Մենք շատ ու շատ կ'ախորժինք։
Մշակն հոս է, հոս՝ մեր քով,
Երջանկութեամբ կը ժպտի,
Անով մեր սիրան հաճոյքով,
Ուրախութեամբ կը լեցուի.
Ո՜հ, ի՜նչ քաղցր է ու բարի,
Որչա՜փ զայն կը սիրեն,
Իր ձեռքերն են, ո՜հ, արի,
Որ ակօսներ կը փորեն։

Թելադրութիւններ.— Բացատրել չեզագիրները։ Թելադրութեամբ գրել հատուածը։

ԱՌԱԾՆԵՐ

Իմացողին մէկ բաւ է, չիմացողին հազարը քիչ։
Մէկ ըսէ, հինգ ըսէ. հինգ չափէ, մէկ կտրէ։

ՀԱՆԵԼՈՒԿ

Զորս եղբայր կան, իրարու ետեւէ կը վազեն, բայց իրարու չեն հասնիր։
(Կառքին անիւները)

ՆՍՏԱՐԱՆ

Շատ մարդիկ չինած են այն նըստարանն որուն վրայ նստած է փոքրիկ մանչը։

Նստարան

Փայտահար Մարկոսը կաղնին կարեց իր տապարով։

Փայտահար

Պողոս ու Գրիգոր սըղոցովզայն իր երկայնքէն կարեցին ու տախտակ պատրաստեցին։


Սղոց

Ատաղձագործ Պետրոսն իր քերիչով տաշեց տախտակները եւ անոր ոտքեր տուելցուց։

Ո՞վ է որ կաղնին յառաջ բերաւ.—Աստուած։

Թելադրութիւններ.— Որո՞նք չինած են նստարանը։ Ինչի՞ կը ծառայէ նստարանը։ Ո՞վ կարեց կաղնին։ Ի՞նչով։ Պողոս ի՞նչ ըրաւ։ Պետրո՞ս ինչ ըրաւ։ Ո՞վ կաղնին յառաջ բերաւ։

Բացատրել անծանօթ բառերը։ Թելադրութեամբ գրել հատուածը։

ԱՐԱԳԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մեր էգին տանձի ծառ մը կայ.
Տանձի ծայրը ծանր տանձ մը կայ.
Ո՞ւր է մեր էգին, ո՞ւր է մեր տանձի ծառը.
Ո՞ւր է մեր տանձի ծառին ծայրի ծանր տանձը։

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ


Շոգեկառք

Շոգեկառքով ո՞ւր կը ճամբորդեն, ջրի՞ վրայ թէ ցամաքի վրայ։

Գոմ

Այս գոմին մէջ ի՞նչ կը տեսնէք։ Ո՞ր կենդանիները գոմի մէջ կ՚ապրին։



Արօր

Ի՞նչ կ՚ընեն արօրով։ Ո՞վ կը վարէ արօրը։

Պարտէզի գործիքներ

Որոշեցէ՛ք թէ այս պատկերին մէջ ո՞ր գործիքը կը ներկայացնէ՝ 1, 2, 3, 4, 5, 6 թիւը։



Հունձքի գործիքներ

Այս պատկերին մէջ ի՞նչ գործիք է 1ը, 2ը, 3ը։ Ատանցմով ի՞նչ կ՚ընեն։

Աղաւակ

Ինչե՞ր կը տեսնէք այս աղաւաքակին մէջ։

Մակոյկ

Ինչի՞ կը ծառայէ մակոյկը։ Մակոյկ նաւատա՞ծ էք։

Շոգենաւ

Շոգենաւով ո՞ւր կը ճամբորդեն, ծովո՞ւ թէ ցամաքի վրայ։

Մկրատ

Ի՞նչ կ՚ընեն մկրատով։ Ո՞ր արհեստաւորները կը գործածեն մկրատը։

Կառք

Որո՞նք կը քաշեն կառքը։ Կառապանն ի՞նչ կ'ընէ։



Վրան

Ինչի՞ կը ծառայէ վրանը։ Ինչո՞ւ կը շինեն վրանը։



Գործիքներ

Որուշեցէ՛ք թէ սապակերին մէջ ի՞նչ գործիքներ կան։ Ատանցմէ իւրաքանչիւրով ի՞նչ կ'ընեն։

Խոզակ

Ո՞վ կը բնակի խոզակին մէջ։ Ո՞վ կը հիւսէ խոզակը։

Փեթակ

Որո՞նք կը բնակին փեթակին մէջ։ Ո՞ւր կը գտնուին փեթակները։



Սեղանի սպասներ

Ի՞նչ կ'ընեն դգալով.— Քանի՞ տեսակ դգալ կայ.— Պատառաքաղով ի՞նչ կ'ընեն.— Դանակո՞վ։

Հիւղակ

Ո՞վ կը բնակի հիւղակին մէջ։ Ո՞ւր կը գտնուի հիւղակը։

Թիկնաթոռ

Ինչի՞ կը ծառայէ թիկնաթոռը։ Ի՞նչ տարբերութիւն կայ աթոռին ու թիկնաթոռին մէջ։



Հողմաղաց

Հողմաղացով ի՞նչ կ՚աղան։ Հողմաղացէն դաս ուրիշ ո՞ւր տեղ ցորեն կ՚աղան։ Ցորեն աղացողն ի՞նչ կը կոչուի։



Ժամացոյց

Ժամացոյցն ի՞նչ է և ինչի՞ կը ծառայէ։ Քանի՞ տեսակ ժամացոյց գիտէք։

Զանգակ

Ինչի՞ կը ծառայէ զանգակը։ Վարժարանին մէջ ե՞րբ և քանի՞ անգամ զանգակ կը զարնեն։

ԱՅԱԴՋԱԳՈՐԾԵՐ

Ծն, ընկերնե՛ր, ելլե՛նք ոտքի,
Առնենք աղոց, կարենք տախտակ,
Բաժնենք շուտով զայն երկուքի
Շինենք անով մեզ աթոռակ:
Սի սոյ, սի սոյ, սի սոյ, սի սոյ։
Պէտք է քերել, յղկել մեր փայտ։
Առնենք քերիչ, յղկենք զանի,
Զգուշանանք, չկարենք մատ,
Ելլանք յարմար գործի, բանի։
Ֆշ ղրդ, քշ ղրդ, քշ ղրդ, քշ ղրդ։
Հիմայ գամենք փայտերն իրար
Մեր ուրագով թաք թիք, թաք թիք,
Գամենք մուր, գամենք ճարտար,
Լաւ չմնալու թափենք մեր ճիգ:
Թիք թաք, թիք թաք, թիք թաք, թիք թաք։

Թելադրութիւններ.— Բացատրել չեղագիրները։ Թելադրութեամբ գրել հատուածը։

ՕՐՈՒԱՆ ՄԱՍԵՐԸ

1. Արշալոյս, 2. Առաւօտ, 3. Ցորեկ, 4. Կէս օր, 5. Իրիկուն, 6. Գիշեր, 7. Կէս գիշեր։

ՇԱԲԹՈՒԱՆ ՕՐԵՐ

1. Կիրակի, 2. Երկուշաբթի, 3. Երեքշաբթի, 4. Չորեքշաբթի, 5. Հինգշաբթի, 6. Ուրբաթ, 7. Շաբաթ։

ԱՄԻՍՆԵՐ

1. Յունուար, 2, Փետրուար, 3. Մարտ, 4. Ապրիլ, 5. Մայիս, 6, Յունիս, 7. Յուլիս, 8. Օգոստոս, 9. Սեպտեմբեր, 10. Հոկտեմբեր, 11. Նոյեմբեր, 12. Դեկտեմբեր։

ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Գարուն, Ամառ, Աշուն, Ձմեռ։

Գարնան ամիսներ. Մարտ, Ապրիլ, Մայիս։

Ամառուան ամիսներ. Յունիս, Յուլիս, Օգոստոս։

Աշնան ամիսներ. Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր։

Ձմրան ամիսներ. Դեկտեմբեր, Յունուար, Փետրուար։

Թելադրութիւններ. — Որո՞նք են օրուան մասերը։ Շաբթուա՞ն։ Քանի՞ ամիս կայ։ Որո՞նք են։ Որո՞նք են Չորս Եղանակները։ Որո՞նք են գարնան ամիսները։ Ամառուա՞ն։ Աշնա՞ն։ Ձմրա՞ն։

Թելադրութեամբ գրել հատուածը։

ԸՆՏԱՆԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ



Ձի

Ձին մարդուս ամէնէն օգտակար անասունն է. ա՛ն է որ մեր բեռները կը կրէ, կը քաշէ արօրը և կը լծուի մեր կառքերուն։



Կով

Կովը մեզի կուտայ աղուոր սպիտակ կաթ, զոր մենք ամէն առտու կը խմենք։

Շուն

Շունը բարեկամ է մարդուս, կը պահպանէ տունն եւ ոչխարները կը պաշտպանէ գայլերուն դէմ։

Կատու

Կատուն կը բռնէ մուկը։

Գառ

Գառը մեզի կուտայ կաթ ու բուրդ։

ԳԱՌՆԻԿՆ ՈՒ ՄԱՅՐԸ

Ինչո՞ւ կուլաս, խե՛ղճ Գառնիկ.
— Շատ ծեծ կերայ ես, մա՛յրիկ։
Քեզ ո՞վ ծեծեց, իմ Գառնիկ.
— Կախարդ պառաւ մէկ կնիկ։
Ինչո՞ւ ծեծեց քեզ, Գառնիկ.
— Էն ծառին տակ, մայրիկ։
Ո՞ր տեղ զարկաւ քեզ, Գառնիկ.
— Թաթիկներուս, իմ մայրիկ։
Ինչպէ՞ս լացիր դուն, Գառնիկ.
— Մէ՜, մէ՜, մէ՜, իմ մայրիկ։

Թելադրութիւններ. — Բացատրել չեղագիրները։ Թելադրութեամբ գրել հատուածը։

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Մարդուն բնակարաններն են տուն, խանութ, եկեղեցի, վանք, բաղնիք, պանդոկ, ջաղացք, ագարակ, վրան, խրճիթ, եւայլն։

Կենդանիներու բնակարաններն են ախոռ, գոմ, փարախ, բոյն, որջ, խշտիկ, եւայլն։

Գիւղացին կը բնակի հիւղի կամ խրճիթի մէջ, հովիւը՝ վրանին տակ, զինուորը՝ զօրանոցին մէջ, հարուստը՝ ապարանքի ու ամարանոցի մէջ, քահանան եկեղեցւոյ մէջ, ճամբորդը՝ պանդոկի մէջ, կրօնաւորը՝ վանքի մէջ։

Թռչունը՝ բոյնի մէջ, օձը՝ հողի

մէջ, արջը ու առիւծը՝ որջին մէջ, ձին՝ ախոռին մէջ, կովը՝ գոմի մէջ, ճուկը՝ ծովուն մէջ, սարդը՝ ոստայնին մէջ, կրիան՝ պատեանին մէջ, մեղուն՝ փեթակին մէջ ու շերամը՝ խողակին մէջ։

Թելադրութիւններ. — Բացատրել անծանօթ գիրերով բառերը։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

Հարցումներ ընել։ Օրինակ. գիւղացին ո՞ւր կը բնակի. — հիւղակին մէջ, ևայլն։

Կարասիներ. Ի՞նչ է սեղան, աթոռ, թիկնաթոռ, գահաւորակ = սոֆա, օրօրոց, նստարան։

Անուններ. Դաւաթ, ափսէ, բաժակ, կուժ, կաթսայ, տապակ, չէշ, պնակ, հեշտաեռ = սամովար։

Ա. Ռ Ա. Ծ

Աղջի՛կ, քեզի կ՚ըսեմ, հարսնո՛ւկ, դուն իմացիր։

ԿԱՏՈՒՆ

Փիսիկ, փիսիկ,
Դու չար փոքրիկ,
Սուր սուր ճանկեր
Ունիս բաներ։
Գիշեր-ցորեկ
Միշտ կը տքնիս,
Խեղճ մկներու
Մահ կը նիւթես։
Թել պեխերդ
Յիս ցիս անկած՝
Միա՜ւ, միա՜ւ
Կը մնաւես։
Երկար պոչդ
Կ՚երկնցնես,
Մկնիկները
Կը մեռցնես։

Թելադրութիւններ. — Բացատրել շեղագիրները։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

ՇՆԻԿԸ

Շնիկս իմ սիրուն,
Ի՞նչ աղուոր ես դուն,
Ի՞նչ գանգուր վարսեր
Գլխէդ են կախուեր։
Երբ ուրախ ըլլամ
Ու խնդամ, խաղամ,
Ինծի հետ դուն ալ
Կը սիրես խաղալ։
Իսկ երբ սաստեն զիս
Ու ցաւի հոգիս,
Դուն ալ ինծի պէս
Արցունք կը թափես։

Թելադրութիւններ. — *Բացատրել չեղագիրները։ — Թելադրութեամբ գրել հատուածը։*

ԹԻՒԵՐՈՒ ՎՐԱՅ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

20 21 22 23 24 25 26 27 28 29 30

Այս թիւերը կարդալ ու գրել գրով։

Ա. Ո Ա. Ծ

Կալին մէջ աշխատող եղին դունջը չեն կապեր։

ԲԱՐԻ ԱՂՋԻԿԸ

Անահիտ բարի աղջիկ մըն է, փողոցները չի պտտիր, չար տղոց հետ չի խաղար։ Ուշադրութեամբ իր դասերուն կը պարապի։ Զբօսանքի ժամուն իր պուպրիկով կը զուարճանայ։ Յետոյ իր Ատրուժան փոքր եղբայրը կը պտտցնէ պարտէզին մէջ. միշտ կը հսկէ որ վատանգ մը չպատահի մանկիկին։ Իր ծնողքը շատ կը սիրեն զինքը։

Թելադրութիւններ. — *Անահիտ ի՞նչպիսի աղջիկ է։ Ի՞նչ կ'ընէ զբօսանքի ժամուն։ Ի՞նչ հոգածութիւն կ'ընէ եղբօրը։*

Բացատրել անջատ գիրերով բառերը։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

ԲԱՐԻ ԱՂՋԻԿԸ

Փոքրիկ աղջիկ մըն եմ բարի,
Կը խելօքնամ ամէն տարի,
Գիրքերուս հետ կ'ապրիմ մինակ,
Անոնք եղան հաճոյիս հիմակ։
Միրգ, կարկանդակ, սեր ու շաքար
Հրապոյր չունին ալ ինձ համար,
Գրիչ, կարկին, թուղթ ու տետրակ,
Խաղալիքներս եղան հիմակ։

Թելադրութիւններ.— Բացատրել շեղագիրները։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

ԹԱՌ, ՀԱՒՆՈՑ, ՎԱՌԵԱԿ

Հաւն ընտանի թռչուն մըն է, հաւնոցին մէջ կը բնակի. անոր արուն է աքաղաղը որ գեղեցիկ ու փայլուն փետուրներ ունի, գլխուն վրայ ալ կատաղ մը։ Հաւին միսն ու հաւկիթը սնունդ են։

Հաւ, Վառեակ

Աքաղաղ


Ծնծղուկ

Ծնծղուկ կը կոչուին բոլոր մանր թռչունները. ո՞մանք հունտ կ'ուտեն, ուրիշներ՝ պըտուղ։


Սոխակ


Գանարիկ

Սոխակին դայլայլիկը, գանարիկին դեղին գոյնը, եկեքանիքին

Եկեքանիկ

Ծիծեռնակ

կին ձայնը, ծիծեռնակին թռչելը շատ սիրուն են։

Թելադրութիւններ. — Հաւն ի՞նչպիսի թռչուն է։ Արուն ի՞նչ կ'ըսուի։ Ինչե՞ր ունի։ Հաւն ի՞նչ կ'ըլլայ։ Որո՞նք ճենճուկ կը կոչուին։ Ի՞նչ կ'ընեն։ Ի՞նչ բան սիրուն են։

Բացատրել անջատ գիրերով բառերը։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

ԻՆՉՊԷՍ - ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեւ է ածուխը, ճերմակ է կաթը։
Թեթեւ է թուղթը, ծանր է երկաթը։
Բարձր է աւելը, խոր են ծովերը։
Տաք է կրակը, զով են հովերը։
Մութ է գիշերը, պայծառ է առաւօտն։
Աղտոտ է խոզը, մաքուր է կատուն։
Բարկ է խացախը, քաղցր է շաքարը։
Կակուղ է բուրդը, կարծր է սա՛ քարը։
Արագ կ'երթայ ձին, դանդաղ է եշը։
Յարգի է լաւը, անարգ է գէշը։

Թելադրութիւններ.— Բացատրել շեղագիրները։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

ՀԱՆԵԼՈՒԿ

Փետրով կը յանեն, աչքով կը քաղեն, գլխով կ'ուտեն, մոքով կը մարսեն։

(Գրել, Կարդալ, Ուսում)

ԱՔԱՂԱՂ

Ինծի ըսէ՛, Աքաղաղ,
Ոսկի կատարիդ մատաղ,
Կարմիր մորուքիդ մատաղ,
Ինչո՞ւ շատով կ'արթննաս,
Բարձր ձայնով կը պոռաս,
Բակի դուռը կը թաղիս.
Քաղցր քունս խռովելո՞ւ,
Օրս անհանգիստ ընելու։

Թելադրութիւններ. — Բացատրել շեղագիրները։ — Թելադրութեամբ գրել հատուածը։

ՀԱՆԵԼՈՒԿ

Վերը երդիկ, վարը դռնակ,
Մէջտեղը ջուր ու կրակ։

(Հեշտաեռ = Սամավար)

ԱՌՏՈՒՆ

Առտու է. աքաղաղները կը խօսին. տունը մէջ ամէն մարդ կ'արթնն-

նայ։ Հայրիկը կը մեկնի, կ'երթայ իր աշխատանոցին մէջ զբաղելու։ Մայրիկը մեզ կը հագուեցնէ, կը մաքրէ և նախաճաշնիս կը պատրաստէ։ Յետոյ ես դպրոց կուգամ փոքրիկ եղբօրս հետ։ Մեծ քոյրս տունը կը մնայ մայրիկին օգնելու համար։

Թելադրութիւններ. — Ի՞նչ կ'ընէ հայրիկը։ Մայրիկը ի՞նչ։

Բացատրել անջատ գիրերով բառերը։— Թելադրութեամբ գրել հատուածը։

ԹՌՉՈՒՆՆԵՐՈՒՆ ԲՈՅՆԵՐԸ

Ամառ օր մը անտառին մէջ կը պատէի։ Օդը տաք էր, ծառի մը տակ նստեցայ և կը դիտէի անոր ճիւղերէն կախուած բոյներն որոնց մէջ փոքրիկ թռչուններ կը ճըլուրը-

լային։ Յանկարծ ծառերուն եռեւէն քանի մը աղաք երեւան եկան. անոնք ալ սկսան բոյները դիտել, յետոյ մագլցելով՝ ծառն եկան։ Այդ աղոց մէկը բոյները կը քակէր, ուրիշ մը ձագերը դուրս կը քաշէր, միւսները հաւկիթները կ'առնէին, փոքրիկ թռչունները միաձայն կը ճուային, իսկ ես կը ցաւէի խեղճ փոքրիկ թռչուններուն վրայ և չէի ուզեր չար տղայ ըլլալ։

Թելադրութիւններ. — Անտառին մէջ ինչ՞ը տեսար։ — Ի՞նչ կ'ընէին աղաք։ — Փոքրիկ թռչունները ի՞նչ ըրին։ —Դո՞ն ինչ եղար։

Բացատրել անջատ գիրերով բառերը։ —Թելադրութեամբ գրել հատուածը։

Ա. Ռ Ա. Ծ

Կռիւը ջուրին ճամբան կը կտրի։

ԳԱԶԱՆՆԵՐ



Առիւծ

Առիւծը կը կոչուի անասուններու իշխանը. շատ հզօր կու է, բաշովն ու երկար պոչովը կը նմանի կատուի։

Աղուէս

Աղուէսը հաւնոցին թշնամին է։

Գայլ

Անգութ գայլն ոչխարներուն թշնամին է. կը խզդէ գառնուկները ու գառները և կը բերէ իր որջն՝ որ անտառին մէջ կը գտնուի։

Արջ

Արջ տեսա՞ծ էք։ Ամբողջ օրեր երբեմն գայն կը ցուցադրեն ու կը խաղցնեն։

Թելադրութիւններ. — Որո՞նք են գազանները։ — Նկարագրել առիւծը։ — Աղուէսը ինչի՞ թշնամի է։ — Գա՞յլը։ — Ի՞նչ կ'ընեն արջը։

Բացատրել անջատ գիրերով բառերը։ — Թելադրութեամբ գրել։

ԱՐԱԳԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ծիսը ճմբոն ծէրին, ծոի ճուտի ճիսը ծուռ։

ԿԱՂԱՆԴԻ ՆՈՒԷՐՆԵՐՍ

Հայր մը, մայր մը, եղբայր մը և երկու քոյր ունիմ։ Հայրս ու մայրս գիս շատ կը սիրեն։ Հայրս այս տարի Կաղանդին տարուոր խաղալիք մը նուիրեց ինծի։ Այս նուէրը փարախ մըն է, որուն մէջ կայ ձի մը, կով մը, երկու մաքի, այծ մը, շուն մը և ուլ մը։ Իսկ մայրս կ՝ահաւորուած տնակ մը նուիրեց։ Այս տնակն ունի սեղանատուն մը, սրահ մը ու ննջասենեակ մը։

Թելադրութիւններ. — Ի՞նչ ունիս դուն։ — Ի՞նչ է Կաղանդը։ — Ի՞նչ նուէր առիր Կաղանդին։ — Հայրդ ի՞նչ նուիրեց։ — Մա՞յրդ։

Բացատրել անջատ գիրերով բառերը։ — Թելադրութեամբ գրել։

ՈՒՏԵԼԻՔ ՈՒ ԽՄԵԼԻՔ

Մարդը կ'ուտէ, կը խմէ, կը կրծէ, կը ծծէ, կը ծամէ, կը կլլէ։

Միսը կ'ուտէ, ոսկորը կը կրծէ։

Կերակուրները կը ծամէ ակռաներով ու կը կլլէ։

Կաթը թէյի հետ և կամ զատ կը խմէ։

Գինին կը խմէ, քացախն ու ձէթը կերակուրի մէջ կը խառնէ։

Արդանակը, ապուրը, թանապուրը, թթու ապուրը, անուշ ապուրը, եղինձը դգալով կ'ուտուին։

Մանուկը կը ծծէ մօրը կաթը։

Դեղը՝ եթէ ջուրի պէս հեղուկ է՝ կը խմուի, եթէ դեղահատ է՝ կը կլլուի։

* * *

Շունը կը լակէ, կը լղէ, կը լափէ։
Մուկը կը կրծէ։
Թռչունը կը կտցէ։

Թելադրութիւններ. — Բացատրել անջատ գիրերով բառերը։ — Թելադրութեամբ գրել։

ՁԱՏԿԻ ՏՕՆԸ

Զատիկը Քրիստոսի Յարութեան տօնն է, ուրախութեան օր մը բոլոր քրիստոնեաներուն համար։ Աստուն կանուխ եկեղեցւոյ զանգակները կը հնչուին. ամէն մարդ իր ամէնէն գեղեցիկ արդուզարդովը հագուած, շքուած, աղօթել կ'երթայ Աստուծոյ։ Եկեղեցւոյ խորանն ալ իր ամէնէն

չքեղ զարդարանքովը կը փայլի։ Ճրագներ, շղարշներ, ծաղիկներ լեցուն են Տաճարին մէջ։ Քրիստոնեաներուն սեղանը կը պատրաստուի կարմիր հաւկիթով և ուրիշ ուտելիքներով։

ԿՐԾՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

Նապաստակը կատուի չափ կենդանի մըն է, ականջները գլխէն մեծ են, շատ արագ կը վազէ, լաւ կը լսէ և շատ վախկոտ է։ Միսը կ'ուտուի։

Նապաստակ

Ճագարը նապաստակէն աւելի փոքր է, միսը համեղ է և գըլխարկ կը շինեն անոր մորթէն։

Ճագար



Մուկ

Մուկը զզուելի տեսքով անասուն մըն է որ կ'ապրի կոյուղիներու մէջ։ Մեծը կը կոչուի Առնէա։

Կուղբ

Կուղբը իր լայն ու երկայն պոչով կը շինէ իր տնակը. անոր մորթէն գլխարկ կը շինեն։

Սկիւռ

Սկիւռին տեսքը շատ գեղեցիկ է, պոչը երկայն ու թաւամազ, մորթը շատ յարգի. անկից մուշտակ կը շինեն։

Թելադրութիւններ. — Որո՞նք են կրծող

անասունները։— Ի՞նչպիսի կենդանի է Նապաստակը։— Ձագա՞ը։— Սկի՞ւռը։— Կո՞ւզը։— Ասանք ի՞նչ օգտակարութիւն ունին։

Բացատրել անջատ գիրերով բառերը։—Թելադրութեամբ գրել։

ԹԻՒԵՐՈՒ ՎՐԱՅ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40

Այս թիւերը կարդալ ու գրել։

ՀԱՅ ԳԻՐԵՐԸ

Հայ եկեղեցին ամէն տարի կը տօնէ Սուրբ Սահակ Հայրապետին ու Սուրբ Մեսրոպ վարդապետին տօնը։ Այդ սուրբ հայրերը գտած են մեր լեզուին գիրերը։ Եթէ գիր չունենայինք, չկրնայինք իրարու հետ հաղորդակցիլ հեռուէն։ Տղայ մը երբ գրել ու կարդալ սորվի, ամէնէն առաջ պէտք է ճանչնայ մեր գի-

րերուն հեղինակները և երախտագիտութեամբ յիշէ անոնց անունը։

ՓՈՔՐԻԿ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

Ճանճ

Ճանճը միջատ մըն է։

Մեղու

Մեղուն մեղր տուող միջատ մըն է։



Սարդ

Սարդը=մամուկը կը հիւսէ իր ոստայնը, և իր ցանցով կ'որսայ ճանճեր։ Աւաղ անխոհեմներուն որ անոր ցանցին մէջ կ'իյնան։

Թիթեռնիկը միջատ մըն է. սիրուն թիթեռնիկները վեհասակար մանրէներ ունին վրանին։

Թիթեռնիկ

Մրջիւնը սողուն մըն է շատ աշխատասէր։

Մրջիւն

Թելադրութիւններ. — Որո՞նք են փոքրիկ անասունները։— Ի՞նչպիսի կենդանի է ճանճը։— Մեղո՞ւն։— Թիթեռնի՞կը։— Սա՞ղը։— Մրջի՞ւնը։ — Ասոնք ի՞նչ կ'ընեն։

Բացատրել անջատ գիրերով բառերը։—Թելադրութեամբ գրել։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ ԶԱՅՆԸ

Մարդը կը խօսի, շունը կը հաջէ, քաժը կը կաղկանձէ, ոչխարը կը մայէ, այծը կը պապաղէ, կովը կը բառաղէ,

եզը կը փչէ, ձին կը վրնջէ, էշը կը զռայ, փիղը կը գոչէ, խոզը կը գանչէ, առիւծը կը մռնչէ, կատուն կը մլաւէ, վագրը կը խռնչէ, հաւը կը կարկաչէ, դորտը կը կռնչէ, արագիլը կը կափկափէ, աղաւնին կը մնջէ, օձը կը սուլէ, թութակը կը խօսի, ճնճղուկը կը ճրուռղէ, ճանճը, մեղուն, եղնակը կը բզզան։

Թելադրութիւններ.— Հարցումներ ուղղել։ Օրինակ. Շունը ի՞նչ ձայն կը հանէ.— Կը հաջէ։ Թելադրութեամբ գրել հատուածը։

ՄՐՋԻՒՆՆ ՈՒ ԱՂԱՒՆԻՆ

Մրջիւն մը ջուրն ինկեր էր. քիչ մնաց որ խեղդուէր, երբ աղաւնի մը որ հոն մօտը կը կենար՝ տեսաւ զայն ու մեղքցաւ։ Անմիջապէս կաուցովը խոտի շիւղ մը բերաւ և կամացուկ մը ջրին վրայ դրաւ։

Մրջիւնը անոր վրայ ելաւ և ազատեցաւ։ Աղաւնին ալ թռաւ գնաց ծառի մը վրայ թառեցաւ։ Որսորդ մը որ հոնկէ կ'անցնէր՝ զայն տեսաւ, հրացանը լեցուց և պատրաստուեցաւ զայն սպաննելու։ Բայց մրջիւնը անոր ոտքը խայթեց։ Որսորդը ետին դարձաւ։ Թռչունն ալ թռաւ ու ազատեցաւ։

Թելադրութիւններ. — Ո՞վ ջուրն խնկեր էր։ — Աղաւնին ի՞նչ ըրաւ։ — Որսորդ մը ի՞նչ ըրաւ։ — Մրջիւնը։ — Ասկէ ի՞նչ կրնաք սորվիլ։

Բացատրել անջատ գիրերով բառերը։ — Թելադրութեամբ գրել։

Ա. Ռ Ա. Ծ

Անծակ մարգրիտ՝ Աստուած կը շարէ
Անողոք դերձանն՝ մարդը կը քաղէ։

ՈՍԿԻ ԵՂՆԱԿՆԵՐԸ

Հայկակ օր մը պարտէզ գնաց վարդ քաղելու։ Բայց յանկարծ կանգ առաւ վարդենւոյն տերեւներուն մէջ ոսկի եղնակներու բոյն մը նշմարելով։ Հայկակ այնքան յափշտակուեցաւ այս տեսարանէն որ ուզեց քակել տանիլ զանոնք, տուփի մէջ պահել, վարդ կերցնել անոնց և ուզած ժամանակը դերձանի մը ծայրը կապել տալով՝ խաղալ հետերնին։ Բայց մտածեց թէ չարութիւն էր աւրել այդ բոյնն ու վարդենին որ այնքան ազուր յօրինուեր են Աստուծմէ։

Ոսկի եղնակ

Թելադրութիւններ. — Հայկակ օր մը ի՞նչ ըրաւ։ — Ո՞ւր տեսաւ ոսկի եղնակները։ — Ի՞նչ ուզեց։ — Ի՞նչ մտածեց։ — Ինչո՞ւ։

Բացատրել անջատ գիրերով բառերը։ — Թելադրութեամբ գրել։

ԹԻՒԵՐՈՒ ՎՐԱՅ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50

Կարդալ ու գրել։

ՁԱՐ ՍԻՐՏ ՏՂԵԿԸ

Անձրեւոտ օր մը տղեկ մը՝ դասագիրքերը տնուքին տակ եւ կերակուրին սակառն ալ ձեռքը բռնած՝ դժուարութեամբ կը քալէր։ Թրջուած սալայատակները սահուն էին, խեղճ տղեկը հաւասարակշռութիւնը կորսնցնելով՝ ցեխին մէջ ինկաւ և դէմքը բոլորովին աղտոտեցաւ։ Սմբատ որ այն տեղէն կ'անցնէր՝ փոխանակ անոր օգնելու, սկսաւ վրան խնդալ։ «Օ՛հ, այդ ինչ ապուոր ես, պէխերդ շատ շուտ բուսեր են», պոռաց հեգնութեամբ։ Այս խօսքերը ըսած վայրկեանին յանկարծ իր ոտքն ալ սահեցաւ և այնպէս ուժգին պառկեցաւ սալայատակին վրայ որ քիթն ու բերանը արիւնեցան։

Թելադրութիւններ. — Տղեկ մը ի՞նչ կ'ընէր անձրեւոտ օր մը։ — Ի՞նչ եղաւ։ — Անկէ ո՞վ կ'անցնէր։ — Սմբատ ի՞նչ ըրաւ։ — Յետոյ ինք ի՞նչ եղաւ։ — Ասկէ ի՞նչ կրնաք սորվիլ։

Բացատրել անջատ գիրերով բառերը։ — Թելադրութեամբ գրել։

ՍՏԱԽՕՍ ՄԻՀՐԱՆ

Փոքրիկ հովիւ մըն էր Միհրան
Որ ամէն օր դաշտին վրան
Արածելու կ'երթար առտուն
Հօտն իր գեղին ոչխարներուն։

Օր մը նեղուած հոն միս մինակ՝
Ըսաւ. «Ազուոր խաղ մը խաղանք»,
Եւ սկսաւ պոռալ ուժով.
«Գայլ կայ, գայլ կայ, հասէ՛ք շուտով»։

Գիւղացիներ եկան հասան,
Ո՛չ գայլ գտան, ո՛չ ալ գաղան,
Քա՜հ.քա՜հ խնդաց անկիրթ տղան.
Ըսաւ անոնց. «Կատակ էր ան»։

Գայլերը եկան օր մը իրաւ,
Մարդ մը ձայնին մտիկ չըրաւ,
Մէկը չեղաւ իրեն պաշտպան.
Կտոր կտոր եղաւ Միհրան։

Բացատրել չեղագիրները։—Թելադրութեամբ գրել հատուածը։

Ա. Ռ Ա. Ծ

Գոտը գողէն գողցաւ
Ատուած տեսաւ զարմացաւ։

ԹԻՒԵՐՈՒ ՎՐԱՅ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 70, 80, 90, 100

Կարդալ ու գրել։

ԳԾԵԼՈՒ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիւ 1



Թիւ 2



Թիւ 3



Թիւ 4





Թիւ 5



Թիւ 6

Թիւ 7



Թիւ 8



Թիւ 9

Թիւ 10



Թիւ 11



2013 3993

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ՄԷԹՈՏՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

			Դրշ.
1.	Մանկապարտէզ	Ա. Տարի	2
2.	Մանկապարտէզ	Բ. Տարի	3
3.	Տարրական Դասընթացք	Ա. Տարի	3
4.	Տարրական Դասընթացք	Բ. Տարի	4
5.	Միջին Դասընթացք	Ա. Տարի	4
6.	Միջին Դասընթացք	Բ. Տարի	4
7.	Մայրենի Լեզու	Գ. Տարի	4
8.	Մայրենի Լեզու	Դ. Տարի	4
9.	Ա. Գիրք Թրանսերէնէ ի Հայ թարգմանութեան		3
10.	Քրիստոնէական		1½
11.	Գեղագրութիւն Խ. Թահտանեանի		

Տեսր Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ.

հատը 20ական փարայ

ԳԻՒՂԱՏՆՏ. ՄԱՏԵՆԱՇԱՐ

1.	Հողային Արդիւնաբերութիւն	Դրշ. 1
2.	Սերմնցուներու ընտրութեան օգուտները	» 1

Այն հրատարակութեանց համար դիմել ուղղակի Ընկերութեան Գրասենեակը, Պոլիս, Պանչէ Գաւիու, Սաղրգիէ խան, թ. 27

ԾԱՆ. Հրապարակ եղած մէն մի օրինակ Ընկերութեան պաշտօնական ԿՆԻՔԸ պէտք է կրէ անպատճառ։